Հետազոտական աշխատանք

Կազմակերպության տվյալներ • Անվանում, հասցե • Տնօրեն • Էլ.հասցե • Հեռախոս	«Մասնակցային դպրոց» կրթական հիմնադրամ Վահրամ Սողոմոնյան masnakcayindproc@gmail.com +37493581908
Հետազոտության թեմա/վերնագիր • Հետազոտության թեմա	Սովորողների ստեղծագործական կարողությունների զարգացումը ֆրանսերենի ժամերին 11-րդ դասարանում
Ուսուցչի տվյալներ • Անուն, ազգանուն, հայրանուն • Մասնագիտություն • Հեռախոս • Էլ. հասցե • Դասավանդվող առարկաներ • Դասարաններ	Անտոնյան Ալվարդ Լևոնի Օտար լեզվի ուսուցչուհի 094 93 05 21 alvard.antonyan@gmail.com Ֆրանսերեն 10-12 դասարաններ

Ուսումնական հաստատության տվյալներ • Անվանումը, հասցե • Հեռախոս • Էլ. հասցե (տնօրենության) • Web կայքի հասցե	Լևոն Արիսյանի անվան համար 127 ավագ դպրոց Ք. Երևան, Պարույր Սևակի 11 010 28 13 32 larisyan127@mail.ru Ք. Երևանի թիվ 127 ավագ դպրոցն ունի 439 աշակերտ, 19 դասարան:

Բովանդակություն

I. Ներածություն **3**
II. Գրականության ակնարկ **5**
III. Հետազոտության ընթացք **18**
IV. Եզրակացություններ **22**
V. Օգտագործված գրականություն **23**
VI. Հավելվածներ **24**

Ներածություն

Նպատակը և հետազոտական հարցը	**Հետազոտական աշխատանքի նպատակն է** ուսումնասիրել ֆրանսերենի ժամերին ավագ դպրոցականների ստեղծագործական ունակությունների զարգացման եղանակները և հնարավորությունները **Հետազոտական հարց** - Ֆրանսերենի ժամերին ինչպե՞ս կարելի է զարգացնել ավագ դպրոցականների ստեղծագործական կարողությունները:
Ո՞ր առանցքային կոմպետենցիային/ կարողունակությանն է ուղղված նպատակի ուսումնասիրությունը	**Լեզվական գրագիտություն և կարողունակություն** - Սովորողները գրավոր և բանավոր կերպով գրագետ հաղորդակցվում են օտար լեզվով՝ ըստ լեզվական կանոնների, կիրառում են լեզուն՝ որպես ուսումնառության և հասարակական կյանքին մասնակցության գործիք: **Սովորել սովորելու կարողունակություն** - Սովորողներն ինքնուրույն և մյուսների հետ համատեղ արդյունավետ սովորում են կյանքի տարբեր իրավիճակներում: Սովորելու ընթացքում աշակերտները ձևավորում են ստեղծագործական մոտեցումներ կիրառելու ունակություններ:
Հետազոտության թիրախային խումբը և շրջանակը /քանակ, սեռային բաշխում/	Տասնմեկերորդ դասարան, 21 աշակերտ (10 աղջիկ, 11 տղա)

Օգտագործված հետազոտական մեթոդները, գործիքները (օրինակ՝ քանական հետազոտություն՝ հարցաթերթիկի միջոցով, որակական հետազոտություն՝ խորին հարցազրույցի միջոցով եւ այլն)	Կատարվել է տեսամեթոդական գրականության վերլուծություն: Հետազոտության նպատակով կիրառվել են դիտման, զրույցի, նախնական և կրկնակի թեստավորման մեթոդներ:
Հետազոտության իրականացման ժամանակահատվածը	2023 թվականի սեպտեմբեր

Հիմնական բովանդակություն

Գրականության ակնարկ ● Մեջբերումներ արդեն արված հետազոտություններից, ● Մեջբերումներ գրականությունից, տեղեկության վստահելի աղբյուրներից: **<u>Պարտադիր է կատարել հղում աղբյուրին</u>**	Երկար մտորումներից հետո, ժամանակա-կից աշխարհի բազմաթիվ ու բազմաբնույթ խնդիրների մեջ, շեշտը դրեցի ֆրանսերենի դասավանդման ընթացքում ավագ դպրոցա-կանների ստեղծագործական մտածողության զարգացման վրա, որն էլ դարձավ իմ հետա-զոտական աշխատանքի նպատակը, որովհե-տեվ քսանմեկերորդ դարում հանրակրթութ-յան մտահոգիչ ու առանցքային հարցերից է ձևավորել այնպիսի մարդ, ով գիտի սովորել, կարողանում է կազմակերպել և կառավարել իր սովորելու գործընթացը, գնահատել, արժե-վորել իր սովորածը: Եվ յուրաքանչյուր անձ հաջողության հասնելու համար պետք է կարո-ղանա ունենալ անհատական, ստեղծագործա-կան մոտեցում, մտածողություն, կարողութ-յուններ, գտնել նոր, թարմ, հետաքրքիր ասե-լիք, եղանակ աշխարհընկալման, շրջապա-տող միջավայրի, մասնագիտական, աշխա-տանքային գործունեության մեջ ու մարդկա-յին հարաբերություններում: Ստեղծագործա-կան մտածողությունը սերտորեն կապված է աշխարհընկալման հետ, պատասխանատու է ստացվող արդյունքի վերլուծության համար, իսկ ստեղծագործական կարողությունները հիմնվում են անհատի հույզերի, ընկալման, մոտեցումների, պատճառահետևանքային կա-պերի վրա:

Մարդն ակտիվ էակ է և կարող է ազդել իրերի ընթացքի վրա: Աշխարհն առաջ են տանում ակտիվ, ինքնուրույն, ստեղծագործա-բար մտածող մարդիկ, ովքեր սերտ կապի, շփման մեջ են սոցիումի հետ: Մարդու ողջ կյանքն ընթանում է սոցիալական համատեք-ստում, նա ապրում և գործում է տարբեր խմբերի կազմում: Եթե անհատը նախաձեռնող չէ և հասարակությունից խուսափում է, ապա նա դժվար թե լուրջ հաջողության հասնի: Հայկական հասարակության մեջ ներկա սոցիալական հարաբերությունների ժամանա-կակից զարգացումները պահանջում են սովո-րողների նկատմամբ նոր, ոչ ստանդարտ մոտեցումներ և որոշում նրանց անձնային հատկություններին ներկայացվող պահանջ-ների սկզբունքորեն նոր մակարդակ, որոնք ապահովում են անձի ներուժի, ստեղծագոր-ծական մտածողության, ինչպես նաև սովո-րողների ստեղծագործական ունակությունն-ների ձևավորում, զարգացում, կատարելագոր-ծում:

Մարդկային կյանքի տարբեր փուլերում, անձնային հատկություններով պայմանավոր-ված, սոցիալական տարբեր զարգացումներ են ծավալվում՝ պայմանավորելով մեր հետագա կյանքի ընթացքը: Սովորողների ստեղծագոր-ծական ունակությունների ձևավորումը և զարգացումը նրանց համար ճանապարհ է բացում դեպի ինքնուրույն սոցիալական գոր-ծունեություն, նոր, սեփական մոտեցման ստեղծում, հետևաբար, ստեղծագործական ունակությունների

զարգացման թեման ինք-նին շարունակում է մնալ արդիական:

Տարբեր հետազոտությունները ցույց են տալիս, որ լինելով անձնային կարևոր որակ, ստեղծագործական մտածողությունը որոշում է անհատի գործունեության հաջողությունը: Ստեղծագործական կարողությունների ուս-ումնասիրման խնդրում կարևոր ներդրում են դարձել Յա.Ա.Պոնոմարյովի, Վ.Ս.Ելագինայի, Խ.Ե.Տրիկի, Ի.Ն.Սեմենովի, Պ.Թորանսի և այլոց գիտական սկզբունքները, գաղափարները և տեսությունները: Տեսություններից յուրաքան-չյուրը հիմնված է այս կամ այն փիլիսոփա-յական հայեցակարգի վրա, ներառում է ավելի կամ պակաս չափով մանկավարժական, հոգեբանական, սոցիալական ասպեկտներ, ուղղված է տեսությունների գործնական կիրառմանը' հատկապես անձնային որակնե-րի, ինքնուրույնության, ստեղծագործական մտածողության՝ որպես օժտվածության նա-խապայման, զարգացման անհրաժեշտութ-յունն ու հնարավորությունը, որոնց եղանակ-ները մեր երկրում դեռևս բավարար չափով մշակված և ուսումնասիրված չեն, ինչով էլ պայմանավորված է հետազոտական աշխա-տանքի «Սովորողների ստեղծագործական ունակությունների զարգացումը ֆրանսերենի ժամերին 11-րդ դասարանում» մեր կողմից ընտրված թեմայի արդիականությունը:

Ժամանակակից մանկավարժագիտության տեսանկյունից՝ ուսուցումը պետք է ուղղված լինի

անհատի զարգացմանը, իսկ յուրաքան-չյուր անհատ զարգանում է յուրովի: Ուստի չափազանց արդիական է ուսումնադաստիա-րակչական գործընթացի կազմակերպումը՝ անձի առանձնահատկությունները հաշվի առ-նելով: Սովորողի անձի ձևավորման գործում ուսուցիչների աշխատանքի կարևորագույն ուղղություններից մեկը պետք է լինի ստեղ-ծագործական ունակությունների զարգացու-մը: Յուրօրինակ լուծում առաջարկելու կարո-ղությունը կախված է ոչ միայն գիտելիքնե-րից, այլև մտածողության յուրահատկությու-նից, անձի մի շարք հատկություններից:

Ստեղծագործության բոլոր տեսակների համար ընդհանուր բաղադրիչների շարքին կարելի է դասել ստեղծագործաբար մտածելու, հիմնախնդիրը բացահայտելու ընդունակութ-յունը: Ուսուցման գործընթացում սովորողնե-րի մոտ ձևավորվող ստեղծագործական փորձը բաղկացած է ոչ միայն ստեղծագործական գործունեության բոլոր տեսակների բնորոշ բաղադրիչներից, այլև հատուկ բաղադրիչ-ներից, որոնք կապված են ոլորտի հետ, որի շրջանակներում ձևավորվում է այդ փորձը [5, էջ 304]: Ստեղծագործելու դրդապատճառները դասվում են ստեղծագործական գործունեու-թյան ամենակարևոր բաղադրիչների շարքին: Դրդապատճառների ճիշտ և հմուտ ձևակեր-պումից է կախված՝ արդյոք կցանկանա՞ն սովորողները ստեղծագործական առաջադ-րանքներ կատարել, թե՞ ոչ, արդյոք կառա-ջարկե՞ն ստեղծագործական

	առաջադրանք-ների կատարման յուրօրինակ մոտեցումներ: Ստեղծագործելու դրդապատճառները կարող են պայմանավորված լինել այս կամ այն ոլորտի նկատմամբ հետաքրքրությամբ, մաս-նագիտությանը պատրաստվելու համար հա-մապատասխան դպրոցական առարկան սովո-րելու և յուրացնելու անհրաժեշտության գիտ-ակցությամբ:Դրդապատճառների վրա ազդում են համադասարանցիների, ծնողների և ուսու-ցիչների կարծիքները: Պակաս կարևոր չէ նաև ինքնահաստատման դրդապատճառը: Դպրո-ցական առարկաները խորացված ծրագրով ուսումնասիրող աշակերտների շրջանում այդ դրդապատճառը շատ տարածված է: Նրանք հաճախ ստեղծագործական խնդիրներ լուծում են, որ ստուգեն՝ արդյոք ճի՞շտ են ընտրել տվյալ դպրոցական առարկան խորացված ուսուցման համար, ինչպես նաև՝ որպես անհատականություն ինքնահաստատվելու նպատակով: Ստեղծագործելու համար անհ-րաժեշտ դրդապատճառների առկայությունն էապես բարձրացնում է ստեղծագործական առաջադրանքների կատարումից ստացվող բավարարվածությունը: Որպես ստեղծագործական մտածողության յուրահատուկ գիծ կարելի է առանձնացնել անորոշության պայմաններում լուծում փնտ-րելու ընդունակությունը [4, էջ 17]: Այդպիսի ընդունակության ձևավորումը հատկապես կարևոր է այն սովորողների համար, ովքեր ուսման մեջ մեծ

հաջողություններ ունեն: Զարգացած հիշողությամբ և տրամաբանա-կան մտածողությամբ օժտված սովորողներից շատերը հեշտությամբ լուծում են բարդ (բայց տիպային) խնդիրներ, և շատ ուսուցիչներ դրանում տեսնում են օժտվածության դրսե-վորում: Յուրօրինակ մոտեցումների որոնումը սովորողից մեծ ջանքեր է պահանջում: Առանց դժվարության լուծված խնդիրը չի կարելի ստեղծագործական համարել: Ստեղծագործա-կան լուծումն ի հայտ է գալիս մի շարք անհաջող փորձերից հետո, անհատի ներքին հակասության, խոր դրամատիզմի պայման-ներում, երբ սովորողը կա՛մ հրաժարվում է որոնումը շարունակելուց (այդ դեպքում նա զգում է ուսուցչի օգնության կարիքը), կա՛մ իր ուղեղում հանկարծակի ի հայտ է գալիս անհրաժեշտ գաղափարը: Պարզապես սովորողների մեջ ստեղծագործական գործունեություն ձևավորելիս պետք է հատուկ ուշադրություն դարձնել առաջադրանքի բացահայտման ուսուցմանը: Մտքերի փոխանակումն ու գնահատումը թույլ են տալիս ավելի լիար-ժեք պատկերացում կազմել առաջադրանքի և կատարման ուղղությունների վերաբերյալ [2, էջ 159]:

Ստեղծագործական առաջադրանքները կարելի է դիտարկել որպես աշակերտի՝ իմաստավորելու և վերաիմաստավորելու ընդունակության բարձրացման միջոց: Առանց այդ ընդունակության (ռեֆլեքսիայի)՝ հնարավոր չէ ձեռք բերել բարձրակարգ գիտելիքներ: Որպես գիտական ստեղծագործական փորձի բաղկացուցիչ մաս՝

դիտվում են նաև աշա-կերտների կատարած ստեղծագործական առաջադրանքները: Պարզ է՝ որ, ինչքան շատ ուսումնական առաջադրանքներ լուծված լինեն, այնքան հարուստ կլինի ուսումնական գիտական ստեղծագործության փորձը: Փոր-ձենք վերլուծել փոխադարձ կապը ինտելեկ-տուալ և ստեղծագործական ընդունակութ-յունների միջև: Կարելի է առանձնացնել գլխավորը. ստեղծագործական (կրեատիվ) ընդունակությունների բարձր մակարդակի համար անհրաժեշտ է միջինից բարձր մտա-վոր զարգացման մակարդակ: Չնայած դրանք տարբեր ընդունակություններ են, այնուամե-նայնիվ, առանց լավ ինտելեկտուալ հիմքի բարձր զարգացած ստեղծագործական ընդու-նակությունների առկայությունն անհնար է: Ինտելեկտուալության որոշակի մակարդակի հասնելուց հետո դրա հետագա ավելացումը ոչ մի ձևով չի ազդում ստեղծագործական ունա-կությունների վրա: Արտահայտված ինտել-եկտուալ հանրագիտակները, համեմատաբար հազվագյուտ են լինում ստեղծագործ մարդիկ: Նրանց ամբողջ գործունեությունը ուղղորդ-ված է պատրաստի գիտելիքների ստացման վրա: Կրեատիվ մանկավարժության գաղափարը ավելի լիարժեք է համապատասխանում վարժարանային կրթության էությանը:

Կրթությունը պետք է դառնա մղում դեպի ստեղծագործումը, քանի որ ստեղծագործու-թյան մեջ է կայանում մարդկայինի բուն էությունը մարդու մեջ: Մանկավարժները և հոգեբանները

ստեղծագործելը դիտարկում են որպես անձի զարգացման կարևորագույն մեխանիզմ: Քանի որ դպրոցական տարիները անձի կայացման տարիներ են, ապա ուսուցչի գլխավոր խնդիրը սովորողների ստեղծագործ անհատականության ձևավորման համար պայմաններ ապահովելն է: Հայտնի է, որ ստեղծագործումը ձևավորվում է գործունեու-թյան մեջ: Հարց է առաջանում, թե ինչպե՞ս կառուցել սովորողների ուսումնական գործու-նեությունը, որպեսզի առավելագույնս բացա-հայտվեն ստեղծագործական ընդունակութ-յունները: Ստեղծագործական մտածողության հաջող զարգացման կարևոր պայմանը մտա-ծելու ընդհանուր կուլտուրայի առկայութ-յունն է, այդ պատճառով ուսումնական գործունեությունը դասերին ուղղվում է, առաջին հերթին, սովորողի ինտելեկտուալ ունակությունների զարգացմանը: Կարողա-նալ վերլուծել, սինթեզել, գտնել պատճառա-հետևանքային կապերը, ընդհանրացնել, եզրահանգել, դասակարգել, համեմատել և այլն: Բացի դրանից, ուսումնական ստեղծա-գործական գործունեությունում օգտագործ-վում են այնպիսի ինտելեկտուալ ընդունա-կություններ, ինչպիսիք են հետաքրքրասիրու-թյունը՝ զգայունությունը շրջակա աշխարհի հիմնախնդիրների նկատմամբ, վարկած մշա-կելու ընդունակությունը, մտքի արագությունը և ճկունությունը՝ անցումը մի գաղափարից մյուսին, մտածելու յուրահատկությունը, ասո-ցման (ունակություն՝ գտնելու անալոգներ այնտեղ, որտեղ ավանդաբար

դրանք չեն դիտարկվում) հեշտությունը: Նշված ինտելեկ-տուալ ընդունակությունների զարգացումը, որոնք որոշում են սովորողների կրեատիվու-թյունը, իրականացվում են ուսումնադաստի-արակչական գործընթացում՝ զարգացող կըր-թական տեխնոլոգիաների միջոցով: Սովորող-ների ստեղծագործական մտածողության զար-գացման եղանակներից մեկը ուսումնադաս-տիարակչական գործընթացի բովանդակութ-յունում ստեղծագործական բնույթի առաջադ-րանքների ընդգրկումն է: Ստեղծագործական բնույթի առաջադրանքների թվին են դասվում պրոբլեմային առաջադրանքները, որոնք սո-վորողներից պահանջում են ինքնուրույն մտածողություն:

Հոգեբանամանկավարժական ուսումնասի-րությունների տվյալներով իսկական ստեղծա-գործող մարդիկ հասարակության մեջ կազ-մում են ընդամենը 20% [2, էջ 159]: Դրա հետ կապված՝ հարց է առաջանում՝ հնարավո՞ր է արդյոք պահանջել ստեղծագործական մտա-ծողության 100% զարգացում առանձին դա-սարանում, թե՞ դրան պետք է ձգտել: Մյուս դժվարությունը կապված է ստեղծագործական առաջադրանքների էությունը հասկացող ուսուցիչների հետ: Դպրոցական կյանքում սովորողների ստեղծագործություն ասելով՝ հաճախ հասկանում են խաչբառերի գեղեցիկ ձևակերպում, հեքիաթի հերոսների կերպար-ների թատերականացում, տեղեկությունների որոնում՝ դասին հաղորդում անելու համար, հաջող նկարներ և այլն: Մեր

	պատկերաց-մամբ ուսուցչի գործունեությունը պետք է ուղղված լինի սովորողի ոչ կաղապարային մտածողության, ստեղծագործական առաջա-դրանքների կատարման գնահատմանը: Ստեղծագործական գործընթացին բնորոշ են բազմափուլությունն ու շրջանայնությունը: Առաջին փուլում հիմնախնդրի լուծման համար պետք է փորձել կիրառել առկա գիտելիքներն ու միջոցները: Երբ այդ փորձը հաջողության չի հանգեցնում, ապա աշա-կերտը կա՛մ հրաժարվում է լուծումից, կա՛մ անցնում է հաջորդ փուլին: Այդ փուլում նկատվում է գիտակցված գործողությունների աստիճանի էական իջեցում: Մտածողության պատկերավոր ուղղվածությունը գերիշխող է դառնում: Ստեղծագործական գործընթացի հաջորդ փուլերը կապված են լուծման տրա-մաբանական հիմնավորման ու ընդհանրաց-ման հետ: Ստեղծագործական գործընթացում առանցքային փուլն է ներընմբռնողական լուծում փնտրելը: Ստեղծագործական ընդու-նակությունների կարևոր բնութագրերից է նաև արդյունավետությունը, որ սովորաբար հասկանում են առաջադրանքի կատարման տարբերակների առաջարկումը և օրիգինալ մոտեցում գտնելը: Այս կամ այն դպրոցական առարկայից ստեղծագործական առաջադրան-քի (ազատ թեմայով շարադրություն, կիսատ պատմության շարունակում և այլն) կատար-ման վրա աշխատելու հաջողությունը կախ-ված է սովորողի ստեղծագործական գործու-նեության բոլոր բաղադրիչներից:

Դիտարկումներն ու հետազոտությունները դպրոցականներից մեծ մասի մոտ հաստա-տում են ստեղծագործական ընդունակութ-յունների (կրեատիվության) անկման հակում: Օժտված երեխաների մոտ ստեղծագործական ունակությունները նկատվում են ավելի շուտ և էապես ավելի արտահայտված ձևերով: Օժտված երեխաներին բնորոշ է զարգացման հատուկ իրավիճակ: Իրականում, վաղ հասա-կից և մինչև դպրոցն ավարտելը օժտվածների մոտ իմացության և ուսուցման գործընթացում նկատվում է դժվարությունների լրիվ բացա-կայություն: Ծնողները, հիանալով օժտված երեխայով, թույլ են տալիս նրանց շրջանցել սոցիալական և կենցաղային դժվարություն-ները (ծնողների գերխնամք): Օժտված երե-խայի մոտ նկատվում են նաև հասակակից-ների հետ փոխազդեցության դժվարություն-ներ, սեփական առանձնահատկությունների հետ հարմարվելու հիմնախնդիր, ուսուցման չափազանց հեշտություն՝ ձանձրույթ և այլն: Ենթադրվում է, որ, վերջին հաշվով, ծագում է դժվարությունները հաղթահարելու հատուկ պահանջ, երբ հեշտը ձանձրալի է թվում և չի հմայում սուբյեկտին: Ուսուցչի խնդիրը պետք է լինի սովորեցնել օժտված դպրոցականին գլուխ հանել անսովոր իրավիճակներից:

Հոգեբանների ուսումնասիրությունները հաս-տատել են, որ դեռ վաղ հասակից երեխայի անձի ինտելեկտուալ և ստեղծագործական զարգացման միջև առկա է էական տարբե-րություն: Գոյություն

ունեն սկզբունքորեն տարբեր երկու տեսակի օժտվածություններ. յուրացված կամ «ուսումնական» և ստեղծա-գործական:

- «Ուսումնական» օժտվածությունը ենթ-ադրում է սեփական մոտեցման բացակա-յություն և կապված է սովորողի ինտե-լեկտուալ զարգացման, այսինքն՝ հիշողու-թյան ու տրամաբանական մտածողության վարժանքի հետ:
- Ստեղծագործական օժտվածությունն այլ է: Ստեղծագործելու համար միայն ինտե-լեկտը բավարար չէ: Ստեղծագործող անձը պետք է գործի անորոշության պայման-ներում, իմաստավորի ու վերաիմաստա-վորի իր գործողությունները, ոչ կաղապա-րային լուծումներ որոնի: Այդ բոլորը նա անց է կացնում իր և աշխարհի սեփական ընկալման միջով: Հենց դա է պատճառը, որ օժտված երեխաների համար հեշտ է ինչ–որ նոր բան գտնելը:

Տեսակետն այն մասին, որ ստեղծագործա-կան ընդունակությունները չեն համընկնում ինտելեկտուալի հետ, դեռևս անցած դարում տարածում է ստացել հոգեբանների ու ման-կավարժների մոտ: Ստեղծագործ երեխաների համար կարևորը ոչ թե գիտելիքների յուրա-ցումն է, այլ՝ սեփական մտքի աշխատանքը: Հատկապես այդ պատճառով էլ շրջապատը, մասնավորապես՝ դասընկերներն ու ծնող-ներն այդպիսի երեխաներին չեն հասկանում, և նրանք

	դասակարգվում են որպես դժվար երեխաներ: Նման երեխաների հետ աշխա-տելն ուսուցիչների համար ծանր է, իսկ հաղորդակցվելը ոչ միշտ է հեշտ ու հաճելի: Ուսուցչի և օժտված երեխաների միջև հաճախ է ծագում միմյանց չհասկանալու իրավիճակ, քանի որ նա չի տեղավորվում բոլորի կողմից ընդունված վարքի ու զարգացման ստան-դարտի մեջ [5, էջ 304]: Անձի ստեղծագործական մոտեցումը և ունակությունները նրա կամային ոլորտի բնութագրերն են, ինչպես և անհատի բնութագրական առանձնահատկություններ, որ արտացոլում են անձի կյանքի, կենսա-գործունեության, մտածողության որակը և աստիճանը, որոնք ուղղված են որոշակի անհատական նպատակի իրականացմանը: Տեսական ուսումնասիրությունների վերլու-ծությունը ցույց է տվել, որ այնպիսի անհատական հատկությունները, ինչպես ստեղծագործական ունակությունները, համա-ռությունը և նպատակասլացությունը մեծ նշանակություն ունեն մարդու հետագա կյանքում: Ողջ կյանքի ընթացքում այդ որակները պետք է անընդհատ բարելավվեն: Կամային հատկությունները ձևավորվում են տարբեր տեսակի գործունեության ընթաց-քում, ինչպես նաև հատուկ մեթոդների կիրառման միջոցով:
Հետազոտության ընթացքը	Հետազոտությանը մասնակցել են ք. Երևանի թիվ 127 ավագ դպրոցի տասնմեկերորդ դասա-րանի

աշակերտներ: Մեր հետազոտական աշխատանքի նպատակն է ուսումնասիրել ֆրանսերենի ժամերին ավագ դպրոցական-ների ստեղծագործական ունակությունների զարգացման եղանակները և հնարավորութ-յունները: Հետազոտության խնդիրներն են.

1. ուսումնասիրել ավագ դպրոցականների ստեղծագործական մտածողության և ստեղ-ծագործական ունակությունների զարգաց-ման սոցիալ-հոգեբանական հիմքերը,
2. վերլուծել ավագ դպրոցականների ստեղ-ծագործական ունակությունների դրսևոր-ման արտահայտվածությունը վարքում,
3. առաջադրել ավագ դպրոցականի կայաց-ման, անձնային աճի և զարգացման արդ-յունավետ եղանակներ ֆրանսերենի ուսուց-ման գործընթացում ստեղծագործական մտածողության խթանման միջոցով:
4. առաջադրել ավագ դպրոցականի կայացման, անձնային աճի և զարգացման արդ-յունավետ եղանակներ ֆրանսերենի ուսուց-ման գործընթացում ստեղծագործական մտածողության խթանման միջոցով:

Հետազոտության նպատակով կիրառվել են դիտման, զրույցի մեթոդներ՝ ավագ դպրոցա-կանների ստեղծագործական ունակություն-ների ձևավորվածության աստիճանը պարզե-լու համար: Նպատակահարմար ենք գտել բերված մեթոդների կիրառումը, քանզի դրանք համապատասխանում են մեր կողմից առա-ջադրված խնդիրների լուծմանը և հարմար են ավագ դպրոցականների

ստեղծագործական ունակությունների մակարդակը որոշելու հա-մար: Նախնական և կրկնակի թեստավորման ժամանակ լրացուցիչ տեղեկատվության հավաքման համար օգտագործվել են դիտման և զրույցի մեթոդները:

Հետազոտության մասնակից ավագ դպրոցա-կանների ստեղծագործական ունակությունն-ը գնահատելու համար օգտագործել ենք դիտման, զրույցի և թեստավորման մեթոդ-ները: Հետազոտության նախնական ախտո-րոշման փուլում պարզեցինք, որ խմբում գերակշռում էր ստեղծագործական հակում-ների միջին և ցածր մակարդակը: Ուսումնա-սիրելու համար, թե ինչպես են ձևավորվում ավագ դպրոցականների ստեղծագործական ունակությունների զարգացումը դպրոցական կրթության պայմաններում ֆրանսերենի ժա-մերին, կազմակերպեցինք փորձարարական-հետազոտական աշխատանք: Հետազոտութ-յան մասնակից ավագ դպրոցականների նախնական արձանագրող հետազոտության ժամանակ հավաքել են ցածր միավորներ և գտնվել են անբավարար մակարդակի վրա: Հետազոտությունը կատարել ենք հետազոտ-ման քարտի միջոցով, որը լրացրել ենք բոլոր ավագ դպրոցականների համար, ապա խմբի տվյալները միջինացրել ստեղծագործական ունակությունների հետազոտման քարտի գնահատման միավորները և ձևավորվածության աստիճանը ներկայացնում ենք հավել-ված 1-ում: Հետազոտության մասնակից ավագ դպրոցականների նախնական արձա-

	նագրող գնահատման խմբի միջինացված արդյունքներն ըստ գնահատման չափանիշ-ների ներկայացնում ենք հավելված 2-ում: Նախնական արձանագրող գնահատումն իրա-կանացնելուց հետո մեր կողմից կազմակերպ-վել են աշխատանքներ, որոնք նպաստում են ավագ դպրոցականների ստեղ-ծագործական կարողությունների զարգացմանը: Փորձարարական հետազոտության իրա-կանացման համար խմբային գործունեություն է իրականացվել: Մշակված և անցկացված պարապմունքները թույլ են տվել ավագ դպրոցականների մոտ զարգացնել հետաքըր-քրություն ստեղծագործական գործունեու-թյան նկատմամբ: Դրանք խթանեցին ավագ դպրոցականների մոտ հորինելու, ստեղծա-գործական գործունեության դրսևորումը: Պարապմունքների ավարտից հետո անցկաց-վել է հետազոտության մասնակից ավագ դպրոցականների վերջնական գնահատում կամ հաստատող թեստավորում, որի արդյուն-քներն ըստ գնահատման չափանիշների ներ-կայացված են աղյուսակ 3-ում: Կատարված ուսումնասիրությունները ցույց տվեցին, որ ստեղծագործական առաջադրանքների կիրա-ռումով դասերը ակտիվացնում են ստեղծա-գործական գործունեությունը: Փորձարարա-կան հետազոտության մասնակից ավագ դպրոցականների նախնական և վերջնական գնահատման արդյունքների համեմատութ-յունը ներկայացրել ենք տրամագիր 1-ով:

	Փորձարարական հետազոտության մասնակից ավագ դպրոցականների նախնական և վերջ-նական գնահատման արդյունքների համեմա-տությունը ցույց տվեց, որ կատարված աշխա-տանքների արդյունքում ստեղծագործական ունակություններում նկատվել է որոշակի առաջընթաց՝ անբավարար մակարդակից անցել են բավարար մակարդակի:

Եզրակացություններ, առաջարկություններ

Վերհանված արդյունքներ, եզրակացություններ, պատասխան հետազոտական հարցին	Ուսումնասիրելով ստեղծագործական առաջադրանքներ կիրառելու միջոցով ավագ դպրոցականների ստեղծագործական կարողությունների զարգացման առանձնահատկությունները, կատարել եմ հետևյալ եզրակացությունները. 1. ավագ դպրոցականների ստեղծագործական ունակությունները հիմնականում ձևավորման ցածր մակարդակի վրա են, 2. ստեղծագործական առաջադրանքներով դասերի անցկացումից հետո ստեղծագործական ունակությունների զարգացման մակարդակը ավելացել է միավորներով, 3. ավագ դպրոցականների ստեղծագործական ունակությունների, ինչպես նաև մասնագիտական զարգացման աշխատանքների արդյունավետության համար վճռորոշ դեր ունեն ուսուցչի հետ վստահելի միջանձնային հարաբերությունները, ներքին կապը: Վերլուծելով ուսումնասիրության ստացված տվյալները, կարելի է եզրակացնել, որ ստեղծագործական առաջադրանքներ կիրառելու միջոցով ավագ դպրոցականների ստեղծագործական ունակությունների զարգացման մակարդակը թեև ոչ էական, բայց նկատելի բարձրանում է:
Այլ տեղեկատվություն	

Օգտագործված գրականության ցանկ

1. Հանրակրթության պետական չափորոշչի ձևավորման և հաստատման կարգ: Հավելված N 1. ՀՀ կառավարության 2021 թ. փետրվարի 4-ի N136-Ն որոշման:
2. Асмолов А.Г. Психология индивидуальности. – М.: Просвещение, 2010. – 159 с.
3. Зимняя И.А. Ключевые компетенции - новая парадигма результата образования / И.А. Зимняя // Высшее образование сегодня. – 2003. –№ 5. – с. 34-42.
4. Пономарев Я.А. К теории психологического механизма творчества. // Психология творчества. Общая, дифференциальная, прикладная. М. Наука, 1990. С. 13-37.
5. Елагина В.С. Развитие творческих, позновательных способностей учащихся. / В.С.Елагина, В. П. Быков // учеб.-метод. пособие. - Москва: ТЦ Сфера, 2005. - 304 с.

Հավելվածներ

Հաշվետվության կցված նյութեր ● Հետազոտության գործիքներ (հարցաթերթիկներ կամ այլ) ● Նկարներ ● Արդյունքներ	

Հավելված 1.

Ստեղծագործական ունակությունների հետազոտման քարտի
գնահատման սանդղակը

Ձևավորվածության աստիճանը	**Գնահատման սանդղակի միավորները**
Լավ	**7,1 - 9**
Բավարար	**4.1 - 7.0**
Անբավարար	**մինչև 4.0**

Հավելված 2.

Հետազոտության մասնակից ավագ դպրոցականների նախնական գնահատման միջինացված արդյունքներն ըստ գնահատման չափանիշների

N	**Գնահատման չափանիշներ**	**Խմբի միջին միավորն ըստ գնահատման չափանիշի**
1.	Կարողանում են թերի պատմությունը շարունակել	**1.3**
2.	Կարողանում են տրված բառերով պատմություն հորինել	**1.2**
3.	Պատմություն հորինելու ժամանակ ցուցաբերում են ստեղծագործական մոտեցում	**1.4**
Խմբի նախնական գնահատման գումարային միավոր		**3.9**

3 միավոր – առաջադրանքը կատարում է ինքնուրույն,

2 միավոր – առաջադրանքը կատարում է օգնությամբ,

1 միավոր – առաջադրանքը կատարել չի կարողանում:

Հավելված 3.

Հետազոտության մասնակից ավագ դպրոցականների վերջնական գնահատման միջինացված արդյունքներն ըստ գնահատման չափանիշների

N	**Գնահատման չափանիշներ**	**Խմբի միջին միավորն ըստ գնահատման չափանիշի**
1.	Կարողանում են թերի պատմությունը շարունակել	**2,4**
2.	Կարողանում են տրված բառերով պատմություն հորինել	**2,1**
3.	Պատմություն հորինելու ժամանակ ցուցաբերում են ստեղծագործական մոտեցում	**2,3**
Խմբի նախնական գնահատման գումարային միավոր		**6.8**

Հավելված 4.



Տրամագիր 1. Հետազոտության մասնակից ավագ դպրոցականների նախնական և վերջնական գնահատման միջինացված արդյունքների համեմատությունն ըստ գնահատման չափանիշների